Այժմ ըստ մեր խոստման տեսնենք քանի մը համեմատական հատուածներ Մխիթարեան ձեռագրէն և Գուլամիրեանի հրատարակութենէն։

Զ. (Բ.) ՄԽԻԹԱՐԵԱՆ ՀԱՐՑ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Թէ ո՞րպէս և վասն է՞ր եղեւ Մուտն դաւթի պէկին ի խափան, և թէ զիա՞րդ եղին միացան ընդ նմա բնակիչք գաւառին և ընդդէմ դարձան թուրքաց.

Ի ժամանակին յորժամ զօրացան ազգն աղուանից թուրքաց ի կողմանս հնդկաց ի դանտահար գաւառին, և յարձակեցան յաշխարհն պարսից ասպատակաւ աւար հարկանել մինչեւ ի գալ պաշարել նոցա, և առնուլ զսպահան քաղաք, և սատակել զշահ հիւսէին արքայն պարսից, որ եղեւ յամի տեառն 1721. *և ի թուին հայոց Ռ. Ճ. Հ.։*

Ի յայս և ի սոյն ժամանակի ի հիւսիսոյ հայոց լակզի թաթարքն ի կողմանս հայոց, և աղուանից արշաւեցին և զգիւղօրէսն գանջու և շամախու ասպատակեալ աւար առին, և զագուլեցին ի մուսալէկեան տոհմէ զիշխանն շամախ ըսպանին, և զամենայն զօրաւոր դիմակացսն սատակեցին, և ժողովուրդս երկրին, և զկանայս և զմանկունս գերի վարեցին, զորոց չունիմք յայսմ վայրի մի ըստ միոջէ պատմել։

Եւ կամ թէ զիա՞րդ զայսչափ չարիս տեսեալ հայոց բնակչացն քուքարացւոց և ուտացւոց ընդդէմ ելին նոցա ի բաց վանել, գունդ կազմեցին, զէն զգեցան պատրաստեցան ի պատերազմ, ճակատ կազմեցին առ թփրթար գետովն, ընդդէմ ամենայն յարձակելոցն յասպատակութիւն երկրին իւրեանց, որք և զանուն առին այսու և կոչեցան մեծ սղնախ մինչեւ ցայսօր։

Եւ թէ որպէս հարին վանեցին, թէ զլազկին, թէ զպարսիկն, և թէ զօսմանցին ոչ ունիմք գրել։ Այլ միայն զխմբելոյն հայոց յեօթնաբերդեան գաւառին խափանու եղելոցն ձեռն արկանեմք պատմել։ (էջ 1–2)։

ՀՐԱՏ. ԳՈՒԼԱՄԻՐԵԱՆԻ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋՆԵՐՈՐԴ

Թէ վասն է՞ր, և կամ ո՞րպէս եկն եմուտ Դաւիթ բէգն ի Խափան գաւառ։ Եւ թէ զիա՞րդ եղին միացան ընդ նմա ամենայն բնակիչք գաւառին, և ընդդէմ դարձան Թուրքաց.

Ի ժամանակին՝ յորժամ զօրայան ազգն Աղուանից Թուրքաց՝ ի կողմանս Հնդկաց՝ ի Ղանդահար գաւառին, և յարձակեցան յաշխարհն Պարսից ասպատակաւ աւար հարկանել, մինչեւ ի գալ՝ պաշարել նոցա, և առնուլ իսկ զՍպահան քաղաք, և սատակել զՇահ Հուսէին արքայն Պարսից, որ եղեւ յամի Տեառն 1721, *և ի Թուականութեանս Հայոց ՌՃՀ* (1170)։

2. *Զայսու ժամանակաւ Լակզի Թաթարքն ի կողմանցն հիւսիսոյ ի Հայս և ի յԱղուանս արշաւեցին. և զգիւղօրէսն Գեանջայու, և Շամախու ասպատակեալ աւար հարկանէին, և զԱգուլեցի Մուսաբէգեան տոհմէ զիշխանն Շամախու, ի մահ մատնէին, և զամենայն զօրաւոր դիմակացսն առ հասարակ սատակէին, և զժողովուրդս երկրին զկանայս, և զմանկունս ի գերութիւն վարէին, զորոց մի ըստ միոջէ յայսմ վայրի չունիմք պատմել։*

3. *Եւ կամ թէ զիարդ զայսչափ չարիս տեսեալ Հայոց բնակչացն Գուգարացւոց, և որ շուրջ էին բնակիչք Հայոց, զինու զարդու յօրինեցան, ի մարտ պատրաստեցան միահամուռ ճակատեալք առ Թառթառ գետովն ընդդէմ ամենայն արձակելոցն ի յասպատակութիւն երկրի իւրեանց* (*որք և զանուն առին այսու, և կոչեցան մինչեւ ցայսօր մեծ Սղնախ*)։

4. *Եւ թէ ո՞րպէս քաջացան սոքա, հարին վանեցին թէ զԼակզին, թէ զՊարսիկն և թէ զՕսմանցին, ոչ ունեմք գրել. այլ միայն զխմբելոցն Հայոց ի յԵօթնաբերդ գաւառին Խափանու եղելոցն ձեռնարկեմք պատմել։* (էջ 1–2)։

Քանի մը հատուածներ ալ Գ. գլուխէն

Անդ էր տեսանել զայն ահեղ տեսիլ կատաղեալ զօրացն ազմուկ աղաղակին. զի իբր զմեքենայսն կանգնեցին, հարիւրաւոր և հազարաւոր դրօշակակիրքն յառաջ խաղացին. ապա զօրքն ամենայն զկնի հեղանէին, իբր յորձանս յորդախաղաց գետոց ահագին գոչմամբ, և կամ

13. *Անդ էր տեսանել զայն ահեղ տեսիլ կատաղեալ զօրացն ազմուկ աղաղակին. զի իբրեւ զմեքենայսն կանգնեցին, հարիւրաւոր և հազարաւոր դրօշակակիրքն յառաջ խաղացին, ապա զօրքն ամենայն զկնի հեղանէին իբր յորձանս յորդախաղաց գետոյ ահագին գոչմամբ, և կամ*